47րդ ՏԱՐԻ ԹԻՒ 659 Կ. ՊՈԼԻՍ ՅՈՒՆԻՍ 26/9 ՅՈՒԼԻՍ 1903 ՀԻՆԳՇԱԲԹԻ 14 1321 ՌԷՊԻՒԼ ԱԽԷՐ — 26 ՀԱԶԻՐԱՆ 1319

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte,
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԳԱՅԷՐԵԱՆ
ՈՐՈՒ ԿՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Բաբը Ալի ճամբան, 38

Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր

# Մանզումէի Էֆքեար

## ՀԱՅԱԹԵՐԹ ՕՐԱՒՕՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افکار
ارمنیجه یومی سیاسی غزته در
صاحب امتیازی : اوهانس قیصریان
اداره خانه‌سی : باب عالی جاده‌سنده نومرو ۳۸

| ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 ղշ. | 50 ղշ. |
| Գաւառներու համար | 108 » | 60 » |
| Օտարաշխարհի համար | 25 Ֆր. | 13 Ֆր. |

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 ղրուշ
Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։

10 ՓԱՐԱ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ՄԱՆԶՈՒՄԷ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ — 10 ՓԱՐԱ

## ՔԱՍԻՄԻ ԹԱՐԳՄԱՆԱԾ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Նկատելով որ ամէն կողմէ գիմումներ կ'ըլլան և դիւրութիւններ կը խնդրուին Աշխ. Նարեկը ստանալու, կը ծանուցանենք թէ, ով որ Նարեկի նախապէս հրատարակուած 39 փորմերով տպարան ներկայանայ պիտի կրնայ գոհացնել ստանալ։

* * *

Գաւառներու բաժանորդները պէտք է կանխիկ ղրկեն իրենց տարեկան բաժնեգինը ԱՇԽ. ՆԱՐԵԿը ստանալու համար։

## ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իզմիրեանց Գրական Մանախումբը տարի մը ետք կը բոլորէ և այսօր իր հանդիսական նիստը կը գումարէ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։ Այդ գեղեցիկ հաւաքումը ինքնին քաղաքակրթական երևոյթ մը կ'ընծայէ Հայ գրականութեան համար, որուն մշակութեան և զարգացման համար հաստատուած է բարեյիշատակ Իզմիրեանց քը կտակը, որուն արդիւնքը բաւական տարիներէ ի վեր կը վայելենք, քիչ թէ շատ, Հայ գրականութեան...

[...]

վաղեան էֆ. պիտի ներկայանայ մը այս մեր տղոց քաղաքական նոխազ ծառայեց, թէև կան ուրիշներ ալ, որոնք իրաւ քիչ մը աւելի լուրջ, սակայն մրցանակը առնելու ու և է ներքին արժանիքէ զուրկ էին բոլորովին։

[...]

հեղինակը գիտէ միայն, և ժամանակ անցնելէ վերջ ձեռագիրն ալ կ'եղծանի կը լմննայ. նմանապէս Լեւոնեանի ծանօթ գործը, և ասկէց առաջ շատ ուրիշներ ալ։

ԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

## ՍԷՕՈՒԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՀԱՆԴԷՍ ԵՒ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Գումգարուի Ասոմբսիոնիստ քոյրերու աղջկանց վարժարանին պարտէզին մէջ, կիրակի օր, կատարուեցաւ ամավերջի հանդէսը։

Ժամը 7ին ծնողքներու և կրթասէրներու ստուար խումբ մը սկսաւ տակաւ հանդիսավայրը լեցնել։

Քիչ վերջը հանդիսավայրը հասաւ ֆրանսական դեսպանին կողմէ Colonnel Parisien, ...

[...]

վիճակած մրցանակը տուաւ (որ էր prix d'architecture)....։

Ի վերջոյ աշակերտուհիները միաձայն արձակուրդի երգը երգեցին, որուն աւարտման Colonnel Parisien, և դիմաց դեսպանին բոլոր ուսուցչաց և քոյր ուսուցչուհեաց իր ջերմագին շնորհաւորութիւնները ըրաւ, և աշակերտուհիներուն քաջալերական մը խօսելով մաղթեց որ առաջիկայ տարիներ այս տարուան նման յաջողակ աշակերտուհիներ և փայլուն շրջանաւարտուհիներ ունենան, որոնք միշտ պատիւ բերեն իրենց սեռին և ի բաքանչիւրը իրենց պատկանած ազգութեան հաւատարիմ անհատներ ըլլան։

Թէ' ծնողք և թէ' կրթասէրներ շնորհաւորեցին վարժարանին բազմավաստակ տնօրէնուհին Mère Jeanne, ինչպէս նաև ի մասնաւորի Soeur Marie d'Immaculée, ուսուցչուհի բարձրագոյն կարգերու։

Հ. Գ.

## ՄԱՆԶՈՒՄԷ

Ցաւալի է որ երբ մարդկայնորէն... կրօնական կրթութիւնը Եւրոպայի ամէնէն զարգացած միջավայրերուն մէջ իսկ վնասակար կը նկատուի և հիմա մեծամեծ պոռթկումներ կ'ըլլան Ֆրանսայի մէջ կղերին ձեռքէն փրկելու, մեր մէջ բազում անձինք կը տեսնուին իրենց զաւակները յանձնելու այնպիսի մարմիններու որոնք ոչ միայն ...

[...]

## ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

### X ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ ԵՒ ԹԱՆՍԵՌԸ

Վերջերս Եւրոպայի բժշկական շրջանակներուն մէջ մեծ աղմուկ հանեց Թանսէռի բուժումը X ճառագայթներու միջոցով։ Այդ առթիւ բազմատեսակ դեղեր ու մեթոտներ յանձնարարուեցան. ոմանք համադրական քիմիայի խառն բաղադրութեան դիմեցին, ուրիշներ պարզ բոյսերու, ինչպէս մանուշակի տերևներէն պատրաստուած խոտ մը բժշկել փորձեցին. ոմանք բժշկութեան արհեստին բոլոր նրբութիւններովը պատրաստուած արինաջուրը (sérum) նախադաս համարեցին, վերջապէս ուրիշներ ալ խոհանոցի աղին պարզ լուծումը օգտակար գտան։

Այս և ասոնց նման բազմատեսակ դեղեր ու մեթոտներ առաջարկուեցան, որոնց փոքրագոյն մասը միայն քիչ թէ շատ արդիւնաւոր եղաւ։ Ասոնցմէ X ...

[...]

(Շարունակելի)

---

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ՔԱՍԻՄ 169

## ԿՆՃՌՈՏ ՀԱՆԳՈՅՑ ՄԸ

ՎԷՊ

ՏՕՂԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բ.

[...]

